ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

***Հաստատվել է՝***

ԵՊԲՀ Գիտական խորհրդի

26.11.2025 թվականի թիվ 25-11-11-09 որոշմամբ

***Ռեկտոր Ա. Մուրադյան***

### *Հոդված 1. Ընդհանուր դրույթներ*

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Ուսանողների վարկանիշավորման կարգով» (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են Համալսարանում ուսանողների վարկանիշա-վորման (այսուհետ՝ Վարկանիշավորում (Good Standing)) չափորոշիչները և վարկանիշային միավորների հավաքագրման պայմանները:

2. Սույն Կարգը տարածվում է Համալսարանի Ընդհանուր բժշկության ֆակուլտետում անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրով, Ստոմոտոլոգիական ֆակուլտետում անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրով, Ռազմաբժշկական ֆակուլտետում անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրով և Դեղագիտական ֆակուլտետներում բակալավրիատի ծրագրով սովորող ուսանողների վրա, ինչպես նաև Քոլեջում սովորողների վրա:

### *Հոդված 2. Վարկանիշավորման նպատակը*

1. Վարկանիշավորումը՝ սովորելու ընթացքում ուսանողների կողմից հավաքագրված տվյալներ են, որի նպատակն է ռեյտինգային կարգով բացահայտել և գնահատել առավել բարձր առաջադիմության, կարգապահության, բարեվարքության, հասարակական ակտիվության համակցված ցուցանիշեր ունեցող ուսանողներին, սահմանելով ուսանողների խրախուսման միջոցների համակարգը:

2. Վարկանիշավորման համակարգի կիրարկումը հիմնվում է թափանցիկության, արդարության և անկողմնակալության սկզբունքների վրա: Բոլոր ուսանողները պահպանում են հավասար հնարավորություններ միավորներ ստանալու և արտոնություններից օգտվելու հարցում՝ ըստ սույն Կարգի հավելվածով սահմանված չափորոշիչների:

***Հոդված 3. Վարկանիշավորման չափորոշիչները***

1. Վարկանիշավորումը ուսանողների կողմից հավաքագրված միավորների սանդղակ է՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար 0-ից 100 բալ կուտակային միավորների չափով:

2. Վարկանիշավորման միավորների հաշվարկը կատարվում է մեկ ուսումնական տարվա ընթացքում, շարունակաբար՝ ուսումնական ընթացիկ և տարեվերջյան ամփոփմամբ: Հաշվարկի միջանկյալ թարմացումներ կատարվելու են կիսամյակի ընթացքում, որպեսզի ուսանողները տեղեկացված լինեն իրենց ընթացիկ GS միավորների մասին:

***Հոդված 4. Վարկանիշավորման մեթոդոլոգիան***

1. Վարկանիշավորման միավորները (տվյալները) հավաքագրվում են հետևյալ երեք մեթոդներով. համակարգային ինքնաշխատ, սանդղակային և հանձնաժողովային գնահատման հիման վրա:

2. **Համակարգային ինքնաշխատ** տվյալները ձևավորվում են ուսանողի համար ամրագրված ցուցանիշերով, այն է առաջադիմությունը, ֆինանսական պարտականությունների պատշաճ կատարումը, կարգապահությունը, ուսանողական ինքնակառավարման մարմնում ցուցաբերած հասարակական ակտիվությունը:

***Առաջադիմության տվյալը***՝ ուսանողի ուսումնառության միջին որակական գնահատականն (ՄՈԳ) է՝ թվային արտահայտմամբ:

***Ֆինանսական պարտավորությունների պատշաճ կատարումը***՝ ուսանողի ուսման վճարը սահմանված ժամկետներում պատշաճ կատարելու համար սույն Կարգի հավելվածով սահմանված ձևաչափի համաձայն միավորն է՝ թվային արտահայտմամբ:

***Կարգապահությունը***՝ վարքագծային դրսևորումների սույն Կարգի հավելվածով սահմանված ձևաչափի համաձայն գնահատականը՝ թվային արտահայտմամբ: Տվյալ

ուսումնական տարում ուսանողի կարգապահական պատասխանատվության առկայության դեպքում ընդհանուր վարկանիշային միավորներից հանվում է սույն Կարգի հավելվածով սահմանված ձևաչափի համաձայն միավորներ:

**Ուսանողական ինքնակառավարման մարմնում ցուցաբերած հասարակական ակտիվությունը**՝ ուսանողի մասնակցությունն է Համալսարանի ուսանողական ինքնակառավարման մարմնի կողմից կազմակերպվող միջոցառումներին և (կամ) ուսանողական մարմինների աշխատանքներին և (կամ) անձնական նախաձեռնությամբ կազմակերպված հանրօգուտ և ուսանողանպաստ միջոցառումներում: Այս դեպքում ուսանողի հասարակական ակտիվության ցուցիչը հաշվարկվում է Ցանկով սահմանված հատուկ բանաձևով:

3. **Սանդղակային (նախորոշված) տվյալները** ձևավորվում են ուսանողի կոնկրետ դրական գործողությունների, ձեռքբերումների և մասնակցությունների համար, որոնք դուրս են մնում ինքնաշխատ հաշվարկից: Այդպիսի գործողությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալ ուղղություններով.

- հետազոտական աշխատանքը,
- կամավորական աշխատանքը (Համալսարանի կամ համայնքի համար),
- ուսուման և (կամ) հետազոտական մրցույթներին մասնակցությունը,
- մասնագիտական կոնֆերանսներին, օլիմպիադաներին և մրցույթներին մասնակցությունը,
- Համալսարանի ներկայացումը արտաքին միջոցառումներին (ակադեմիական, մշակութային կամ հասարակական),
- սպորտային մրցույթներին մասնակցությունը և հաղթանակները,
- այլ ուսանողական նախաձեռնություններին և ծրագրերին մասնակցությունը, որոնք նպաստում են Համալսարանի ճանաչմանը և ուսանողի մասնագիտական աճին:

Նման յուրաքանչյուր գործողության համար սույն Կարգի հավելվածով սահմանված ձևաչափով նախորոշվում է բալային միավոր՝ ըստ նրա բնույթի և նշանակության:

4. **Հանձնաժողովային գնահատում.** առանձին դեպքերում, երբ ուսանողի վարքագիծը, գործունեությունը կամ խախտումները դուրս են վերը նշված ավտոմատ կամ սանդղակային չափորոշիչներից, կիրառվում է գնահատման հանձնաժողովային

մեթոդները՝ Համալսարանի ռեկտորի կողմից ստեղծված Վարկանիշային հանձնաժողովի կողմից հետևյալ չափորոշիչներով՝

- Վարկանիշային հանձնաժողովը քննում է անհատական դեպքերը, որոնք դուրս են սույն հոդվածով նախորոշված չափորոշիչներից և որոշում է հավելյալ միավորների տրամադրման չափը.
- Վարկանիշային հանձնաժողովի որոշումները հիմնավորվում են փաստաթղթերով կամ իրավիճակի մանրամասների ուսումնասիրությամբ և արձանագրվում են պաշտոնական արձանագրությամբ:

5. Սույն հոդվածով կարգով հավաքագրված թվային արտահայտությամբ միավորները գումարվում են՝ ձևավորելով վարկանիշային մինչև 100 միավորի գնահատականը:

***Հոդված 5. Դրական և լավ ցուցանիշերով վարկանիշ ունեցող ուսանողների արտոնությունների համակարգը***

1. Ուսանողի կուտակած վարկանիշային միավորների համար սահմանվում են սույն Կարգի հավելվածով սահմանված ձևաչափով նախատեսված արտոնությունները կամ հնարավորությունները՝ հետևյալ սկզբունքներով.

Ուսանողներին տրվող արտոնությունները պայմանականորեն բաժանվում են 3 հիմնական բաժինների.

- Ընթացիկ ակադեմիական տարվա համար տրվող արտոնություններ. Այս արտոնությունները տրամադրվում են ուսանողին ինքնաշխատ եղանակով և վավեր են ակադեմիական տարվա ընթացքում: Այն դեպքերում, երբ ուսանողից բացասական որևէ երևույթի համար հանվել են միավորներ, որի արդյունքում նրա վարկանիշային գումարային միավորները կազմել են նվազ, քան արտոնությունների տրամադրման համար անհրաժեշտ շեմը՝ ուսանողը ակադեմիական տարվա ընթաքում զրկվում է այդ շեմից:
- Խմբային արտոնություններ. Սա արտոնությունների այն տեսակն է, որին կարող են դիմել ուսանողական խմբերը՝ կիրառելով խմբում ընդգրկված բոլոր ուսանողների վարկանիշային միավորների հանրագումարը:

• Անհատական արտոնություններ. Արտոնությունների այն խումբն է, որը կիրառելի է անհատապես տվյալ ուսանողի համար՝ պայմանավորված տվյալ ուսանողի վարկանիշային միավորներով:

2. Ուսանողներին տրվող արտոնությունների ցանկը կարող է տարբերվել՝ կախված նրանց ուսուցման լեզվից, ֆակուլտետից, ուսանողի քաղաքացիությունից և այլ կարգավիճակներից:

***Հոդված 6. Վարկանիշային հանձնաժողովի կազմավորումը և գործունեության կարգը***

1. Ուսանողների վարկանիշավորման գործընթացն իրականացնելու նպատակով Համալսարանի ռեկտորի կողմից կազմավորվում է Վարկանիշային հանձնաժողով:

Վարկանիշային հանձնաժողով կազմում ներառվում են.

• Համալսարանի զարգացման և մարքեթինգի գծով պրոռեկտորը՝ որպես Հանձնաժողովի նախագահ,

• Կարիերայի զարգացման կենտրոնի ներկայացուցիչ՝ որպես հանձնաժողովի քարտուղար,

• Ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, ռազմաբժշկական և դեղագիտական ֆակուլտետների դեկանները և Քոլեջի տնօրենը,

• Ուսանողական ինքնակառավարման մարմինի նախագահը,

• Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավարը,

• Իրավաբանական բաժնի ներկայացուցիչ:

Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովում կարող են հրավիրվել մշտական կամ ժամանակավոր այլ անդամներ կամ մասնագետներ:

2. Վարկանիշային հանձնաժողովի նիստերը իրավազոր են, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի 2/3-ը:

3. Վարկանիշային հանձնաժողովը որոշումները ընդունում է բաց քվեարկությամբ, անդամների պարզ մեծամասնությամբ:

4. Վարկանիշային հանձնաժողովը նիստ է հրավիրում պարբերաբար (առնվազն յուրաքանչյուր կիսամյակի վերջում) և (կամ) ըստ անհրաժեշտության՝ քննարկելու առանձին ուսանողների վարկանիշային միավորների հետ կապված հարցերը:

5. Վարկանիշային հանձնաժողովի նիստերը հրավիրում է նախագահը՝ սահմանելով օրակարգը և նախապես, քարտուղարի միջոցով տեղեկացնելով անդամներին:

6. Նիստերին քննարկվում են այն դեպքերը, որոնք ստանդարտ ինքնաշխատ կամ սանդղակային կարգով միավոր ստանալու/կորցնելու ենթակա չեն, ինչպես նաև ուսանողների կամ միջնորդագրերով ներկայացված վերանայման դիմումները վարկանիշային հաշվարկների վերաբերյալ:

7. Յուրաքանչյուր հարցի քննարկմանը կարող է հրավիրվել տվյալ ուսանողը կամ համապատասխան ստորաբաժանման պատասխանատուները՝ պարզաբանումներ տրամադրելու համար:

8. Վարկանիշային հանձնաժողովի որոշումները կազմվում են գրավոր արձանագրությամբ, որը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր ներկա անդամների կողմից և պահպանվում է Կարիերայի զարգացման կենտրոնում: Որոշումների հիման վրա կատարվում են համապատասխան փոփոխություններ ուսանողների վարկանիշավորման միավորների հաշվարկում:

9. Վարկանիշային հանձնաժողովը յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ներկայացնում է հաշվետվություն՝ իր կողմից քննարկված դեպքերի, կայացված որոշումների և Վարկանիշավորման համակարգի գործարկման վերաբերյալ՝ Համալսարանի ռեկտորատին:

10. Հանձնաժողովը սույն կարգի Հավելվածով սահմանված ձևաչափի համաձայն կազմում և Համալսարանի Ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ուսանողների վարկանշավորման GS բալերի մավորները:

## *Հոդված 8. Վարկանիշավորման համակարգի թափանցիկության և մոնիտորինգի մեխանիզմները*

1. Վարկանիշավորման համակարգի չափանիշներն ու միավորների հաշվարկման բոլոր կանոնները հրապարակվում են ուսանողների համար հասանելի հարթակներում, բաց ձևաչափով (համալսարանի պաշտոնական կայքում, ուսանողի ուղեցույցում կամ ուսանողներին տրամադրվող էլեկտրոնային փոսերի միջոցով առաքվում են նրանց), ապահովելով յուրաքանչյուր ուսանողի տեղեկացվածությունը:

Ուսանողը պետք է ունենա հնարավորություն վարկանիշավորման վերաբերյալ լրացուցիչ մատչելի պարզաբանումներ ստանալու:

1. **Հաշվարկների թափանցիկություն և վերահսկողություն:** Ինքնաշխատ հաշվարկով ավելացված կամ հանված բալերը հիմնավորված են համապատասխան տեղեկատվական համակարգում գրանցված տվյալներով (օրինակ՝ գնահատականների մատյան, վարձավճարի վճարման ամսաթիվ, նկատողության հրաման և այլն): Յուրաքանչյուր ավտոմատ փոփոխություն փաստաթղթավորված է և հասանելի է պատասխանատու ստորաբաժանումներին: Սանդղակային միավորներ տրամադրելիս Կարիերայի զարգացման կենտրոնի պատասխանատու աշխատակիցը կազմում է հաստատված ձևով արձանագրություն, որտեղ նշվում է ուսանողի մասնակցությունը և սահմանված բալային արժեքը՝ ստորագրված պատկան մարմնի կողմից:

2. **Տվյալների պաշտպանության և գաղտնիության պահպանում:** Ուսանողների GS միավորների վերաբերյալ մանրամասն տվյալները հասանելի են միայն տվյալ ուսանողին և համապատասխան պաշտոնատար անձանց: Անձնական տվյալների պաշտպանությունը երաշխավորվում է համալսարանի տեղեկատվական անվտանգության ներքին կանոններով:

3. **Ուսանողական մասնակցություն վերահսկողությանը:** Ուսանողական ինքնակառավարման մարմինը և այլ շահագրգիռ կառույցներ ներգրավված են Good Standing համակարգի իրագործման մոնիտորինգում: Նրանք կարող են ներկայացնել առաջարկություններ համակարգի կատարելագործման վերաբերյալ, ինչպես նաև ապահովել հետադարձ կապ ուսանողության և համալսարանի ղեկավարության միջև՝ համակարգի աշխատանքի թափանցիկության և արդարության վերաբերյալ տեղեկատվություն փոխանցելով ու առաջարկություններ ձևակերպելով:

* * *

Հավելված

Ձևաչափ

| Տրամադրվող GS միավորի մեթոդ | |
|---|---|
| **Մեթոդի անվանում** | |
| Սահմանում / Միջակայք | GS միավոր |

| GS միավորների հիման վրա տրամադրվող արտոնություն | | |
|---|---|---|
| Անվանում | Արտոնության տրամադրման ֆակուլտետ, կուրս, ուսումնառության տարի, ուսումնառության լեզու (ըստ անհրաժեշտության) | GS միավոր |